

6954



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ԱԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 121 - 24

Նախաձեռնող՝

«ԲՈՅՄՈՒՇԱԿԱՆ ՍԹՈՒՆ» ՍՊԸ
Արարադի մարզ, ք. Արարադ, Խանջյան 58 շենք, բնակ. 27

Գործունեությունը՝

Արարադի տրավերտինների և կավերի
հանքավայրի «Բոյմուշակյան տրավերտինների»
տեղամասում երկրաբանական
ուսումնասիրություն
Արարադի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 121 - 24

« 17 » հուլիսի 2024թ.

Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Բոյմուշակյան տրավերտինների» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՍԹՈՒՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝
փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, ք. Արարատ

Ներածական մաս Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Բոյմուշակյան տրավերտինների» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Արարատի մարզի, Արարատ քաղաքի վարչական տարածքում և զբաղեցնում է մոտ 5.7 հա տարածք: Տեղամասն Արարատ քաղաքից գտնվում է 1900 մ, Ավշար բնակավայրից 3.07 կմ, Արարատի ցեմենտի գործարանից 700 մ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով, հողատեսքն՝ արոտավայրերի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (կոորդինատները ներկայացված են ARMWGS-84 համակարգով).

- | | |
|---------------|------------|
| X | Y |
| 1. 8476095.18 | 4414352.88 |
| 2. 8476087.48 | 4414389.66 |



3.	8476105.95	4414397.85
4.	8476155.23	4414437.97
5.	8476159.82	4414529.89
6.	8476134.53	4414582.74
7.	8476078.67	4414597.83
8.	8476135.4	4414714.4
9.	8476140.58	4414709.59
10.	8476180.23	4414684.9
11.	8476207.8	4414674.69
12.	8476236.0	4414674.68
13.	8476281.6	4414686.9
14.	8476291.74	4414702.44
15.	8476373.32	4414477.29

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատանցքերի, մաքրվածքների և փորձնական բացահանքի միջոցով, նմուշարկման զուգորդությամբ:

Տրավերտինների որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով՝ նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից, մաքրվածքներից կատարել նմուշարկում, իսկ խիստ հողմահարված, ճեղքավորված տրավերտինները նախատեսվում է օգտագործել որպես ցեմենտի հումք: Նմուշները «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է երեք հետախուզական գծերի վրա հորատել 6 հորատանցք՝ 130 մ ընդհանուր ծավալով, որի համար 6 անգամ կկատարվի ՈՒԳԲ-50Մ ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Հորատանցքերի խորությունն ընդունվում է մինչև 32 մ: Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ-50Մ հորատող հաստոցով, 132 մմ սկզբնական և 76 մմ վերջնական տրամագծով կարծր համաձուլվածքային թագիկներով: Օգտակար հանածոյի հորատհանուկի ելքը պետք է կազմի 85%:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում տրավերտինների զանվածից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար: Փորձնական բացահանքի ճակատի երկարությունը նախատեսվում է 15.0 մ, ծավալը՝ 300 մ³: Նախատեսվում է անցնել նաև 2 մաքրվածքներ, յուրաքանչյուրը 10 մ երկարությամբ, 2 մ խորությամբ և 1.5 մ լայնությամբ: Մաքրվածքների ընդհանուր ծավալը կկազմի՝ 60 մ³:

Պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Փաստագրման աշխատանքների ժամանակ կիրականացվի՝
- հորատհանուկի փաստագրում՝ 130 զձ.մ,



- մաքրվածքների փաստագրում՝ 20.0 գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում՝ 15.0 գծ.մ,
ընդամենը՝ 135 գծ.մ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով:

Տրավերտինների որակական հատկությունները պարզաբանելու նպատակով նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից, մաքրվածքներից կատարել նմուշարկում:

Մաքրվածքներից և փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել 3 ակոսային նմուշ՝ այդ թվում 1-ը բացահանքից, 2-ը մաքրվածքներից:

Ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 30 նմուշ, այդ թվում 26 հանուկային և 4 մենաքարային նմուշ, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Տրավերտինների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ՝ այդ թվում 2-ը հորատհանուկից, 1-ը ակոսային նմուշներից:

Նախատեսվում է կատարել նաև ապարակազմական /պետրոգրաֆիական/ հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 3 հղկուկ:

Հորատումից ստացված ամբողջ հորատհանուկը ենթարկվում է նմուշարկման:

Հանքերևակման խիստ հողմահարված, ճեղքավորված տրավերտինները՝ որպես ցեմենտի հումք պարզելու համար, նախատեսվում է վերցնել 2 համախառն նմուշ, յուրաքանչյուրը 150 կգ քաշով, ընդհանուրը 300 կգ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական, քիմիական, պետրոգրաֆիական ուսումնասիրություններ:

Նախատեսվում է կատարել նաև պետրոգրաֆիական հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 3 շիֆ:

Հետախուզվող տարածքում ինժեներակրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Անցած լեռնային փորվածքների հանուկը ենթարկվելու է ռադիոմետրական չափումների՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու նպատակով:

Անմիջապես աշխատանքների ավարտից հետո իրականացվելու են ռեկուլտիվացիոն աշխատանքներ հորատահարթակների, մաքրվածքների և փորձնական բացահանքի խախտված տարածքում: Վերականգման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 363.0 մ²:

Բացի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից, նախատեսվում է նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում է մասնահանել 698 520 ՀՀ դրամ, որից 14 520 ՀՀ դրամը՝ կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման համար:



Ըստ ներկայացված հայտի՝ հայցվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ բնության հուշարձանների սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից բնակավայրերի մոտակայքում:

Հայցվող տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա սպասարկման կետերում, կամ կայաններում, ինչը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

-Կենցաղային աղբը նախատեսվում է հավաքել հատուկ պարկերի մեջ հետագայում տեղափոխելով մոտակա աղբահավաք կետեր:

-Արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով մեքենաների վրա նախատեսվում է տեղադրել կատալիտիկ ֆիլտրներ:

-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է տեղամասին մոտեցնող ճանապարհի երկայնքով, մաքրվածքների և փորձնական բացահանքի անցման տարածքներում իրականացնել ջրցան:

-Կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, կամ կենսաբանական մաքրման լոկալ կայանում, որոնց մաքրումը կամ դատարկումն իրականացվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

-Իրականացվելու են բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

-Աշխատանքների իրականացման ժամանակ երևակման տարածքում և ճանապարհի հարակից տարածքում (ցեմենտի գործարանի և Արարատ քաղաքի բնակելի տարածքների ուղղությամբ) իրականացվելու է մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

-հողային ծածկույթի աղտոտվածության (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր) մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

-վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

-աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ արտադրական տարածքի (ցեմենտի գործարան) ուղղությամբ տարեկան մեկ անգամ:

Երևակման տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար ընկերությունը նախատեսել է տարեկան 350.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Արարատի մարզի Արարատ քաղաքում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:



Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԲՈՅՄՈՒՇԱԿՅԱՆ ՍԹՈՌՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի «Բոյմուշակյան տրավերտինների» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության



նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

h. V...

Հովիկ Մեսրոպյան